

տուաւ «մաքրակենցաղ եւ սրբանունդ» առաքեալի համբերութեան առջեւ, եւ թշնամիները — ահսոս որ ազգայիններ էին անոնք — խոնարհեցան անոր առջեւ. «նոքա որչափ ջանային ընկճել՝ ինքեանք լինէին այսին կատականաց» (Ղուկաս զրիչ) : Սոստովանեցաւ կաթողիկոսը թէ «ահա ազգս Հայոց մեծ եւ փոքր երես դարձուցին յինէն եւ դքեղ սիրեն եւ ընդունին . . . դու վարեա այսուհետեւ զկաթողիկոսութիւնն, որպէս եւ ետդ արժանի» :

Կաթողիկոսական պատուին հետամուտ չէր Մովսէս, բայց կը պահանջէր ազատ խօսք, ազատ ստապարէզ եւ անկաշկանդ ունենալ բազուկները : Կը կարօտէր Եկեղեցին ի դուռսս եւ յանդամս վերանորոգութեան. պէտք էր կուռիլ թուրամորթ, դատարկաձեռն, կենցաղասէր առաջնորդներու դէմ, պէտք էր սլայքարիլ գեղձումներու դէմ, զսպել վաշխառուները, բարձրացնել բարոյական կարգերը, նորոգել կիսափուլ տաճարները, սլայժառացնել եկեղեցիները, դաստիարակել ժողովուրդը, ծաղկեցնել ամայութիւնը եւ վառ պահել հայ սրտին մէջ կրօնի եւ լուսաւորութեան կանթեղը : Եւ յարատեւեց կուռի դաշտի վրայ մինչեւ որ տարաւ յաղթութիւնը : Մինչ փաստէրնները փախուստի կը դիմէին, փառքը կը հետապնդէր փառքէն փախչողի ետեւէն :

Ազգը միահաւան, միախորհուրդ ընտրեց իւր Առաջնորդը : Չէր սխալած իւր ընտրութեան մէջ : Մովսէս եղաւ Ազգին «կրկին լուսատուն», նոյն իսկ «բազմապատիկ լուսաւո-